ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ _____ Ա.Ուզունյան

<< 31 >> օգոստոս 2023թ.

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Դասարան՝ II Ա

Դասղեկ՝ Գ. Հարությունյան

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2-րդ Ա դասարանում սովորում է 13 աղջիկ, 9 տղա: Դասարանի աշակերտները համախմբված են, համերաշխ: Ծնողական կոլտեկտիվը միասնական է:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում:
2023-2024ուս. Տարում նախատեսվում են բազմաթիվ և բազմաբնույթ միջոցառումներ՝ քննարկումներ, զրույցներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, պատկերասրահ, թանգարաններ, թատրոն, համերգասրահ, դասղեկի ժամեր:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն:
Մատչելի տեղեկացնել հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներին՝ իրենց իմաստով: Ամրապնդել Հայաստանի հոգևոր արժեքները ճանաչելու, գնահատելու ունակությունները: Դասղեկի ժամերին անցկացնել զրույց քննարկում, Աստվածաշնչյան քրիստոնեական թեմաներով: Այցելել եկեղեցիներ:
3.2 Գեղագիտական դաստիարակություն:
Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, զարգացնել սեր դեպի ճիշտ ազգային մշակույթը: Այցելել պատկերասրահներ և մշակույթի օջախներ: Դասարանը կահավորել ակնահաճո ու նպատակային:
3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:
Դաստիարակել անմնացորդ սեր և նվիրում առ հայրենիք: Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, քաջություն, կամքի ուժ: Ծանոթացնել հայ ժողովրդի անցած ուղուն՝ նրա փառավոր էջերին որ հերոսներին: Ամրապնդել այն գիտակցությունը, որ հայ լինելն ու Հայաստանում ապրելը մեծագույն պատիվ է ու երջանկություն:
3.4 Ֆիզիկական դաստիարակություն :
Սովորեցնել հետևել անձնական հիգիենային: Հաճախ հիշեցնել կեցվածքի մասին: Զարգացնել ֆիզիկական պատրաստվածությունը: Տեղեկություններ տալ սպորտի հայ առաջատարների մասին:
3.5 Աշխատանքային դաստիարակություն :
Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն: Հետևել դասասենյակի մաքրությանը, սահմանել հերթապահություն: Զրույց՝ << Աշխատանքով է մարդը գեղեցիկ: Այն ոչ միայն բարիքի, այլ նաև երկրի հզորացման աղբյուր է>> թեմայով:
3.6 Բնապահպանական դաստիարակություն :
Աշակերտներին իրազեկել առկա էկոլոգիայի, բնապահպանության խնդիրներին: Սովորեցնել ճանաչել ու սիրել հայրենի բնությունը: Այն պահանջնում է ամենօրյա հոգատարություն և ուշադրություն: Զրույց՝ <<Խնայենք անտառը , ջուրը, էլեկտրաէներգիան >>թեմայով:
4. Դպրոց-ընտանիք կապը :
Ապահովել աշակերտ ծնող դպրոց կապը: Ծնողներին ներգրավել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին և աշխատանքներին: Յուրաքանչյուր աշակերտի ծնողի հետ աշխատել անհատական մոտեցմամբ՝ ելնելով երեխաների անհատական առանձնահատկություններից:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարման ժամկետը
1-ին շաբաթ	ԾԽ-ի ընտրություն: Դասարանի ավագի ընտրություն:	7.09
2-րդ շաբաթ	Զրույց << Դպրոցը մեր տունն է, մեր համերաշխ ընտանիքը>> թեմայով:	14.09
3-րդ շաբաթ	Զրույց՝ << Մեր անկախությունը 32 տարեկան է >> թեմայով: Բացատրել մեր պարտության հիմնական պատճառները:	20.09
4-րդ շաբաթ	Զրույց՝ <<Փոխհարաբերություններ, հանդուրժողականություն >> թեմայով	28.09
5-րդ շաբաթ	Բոլոր լուսե մարդկանց ուսուցիչ անունն են տվել: Շնորհավոր տոնդ, ուսուցիչ	5.10
6-րդ շաբաթ	<<Գիտեմ, պատրաստ եմ, կարող եմ >>- պատրաստվածություն արտակարգ իրավիճակների:	12.10
7-րդ շաբաթ	Զրույց՝<< Ինչպիսին է մեր առաջադիմությունը, իսկ վարքը>> թեմայով : Կարծիքների փոխանակում, եզրահանգում:	19.10
8-րդ շաբաթ	Զրույց՝<< Մեր իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով:	2.11
9-րդ շաբաթ	Զրույց՝<<Ինչ է արժանապատվությունը >> թեմայով:	9.11
10-րդ շաբաթ	Զրույց << Երթևեկության կանոնները>> թեմայով :	16.11
11-րդ շաբաթ	Առողջ ապրելակերպ: Ճիշտ օգտվենք օրվա ռեժիմից:	23.11
12-րդ շաբաթ	Այցելություն Խնկո Ապոր գրադարան:	30.11
13-րդ շաբաթ	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր: Զրույց << Ինչպես պաշտպանվել բնական աղետներից>>:	7.12
14-րդ շաբաթ	<<Ամանորին ընդառաջ>> դասասենյակի ձևավորում:	14.12

ուսումնական շաբաթը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարման ժամկետը
15-ին շաբաթ	Ամանոր, բեր մեր երկրին խաղաղություն, առատություն ու լուսավոր ապագա: Զրույց << Սուրբ Ծննդյան>> տոներ թեմայով:	21.12
16-րդ շաբաթ	Զրույց՝ <<Հայրենիքը միային բնակության վայր չէ >> թեմայով: Հայոց բանակի ստեղծման 32 ամյակի առթիվ:	26.01
17-րդ շաբաթ	Զրույց՝ <<Բարեգործությունը մարդու ամենամեծ առաքինությունն է>> թեմայով:	1.02
18-րդ շաբաթ	Լավ ու վատ սովորությունները: Վատ սովորությունների հետևանքները:	
19-րդ շաբաթ	Զրույց << Արդյունավետ օգտվենք համակարգչից >> թեմայով:	
20-րդ շաբաթ	Նվիրի գիրք, ընդունիր ընծա՝ գիրք: Գիրք նվիրելու տոն: Զրույց << Անաղարտ պահենք մեր մայրենին >> թեմայով:	19.02
21-րդ շաբաթ	Զրույց՝ << Ինչ է ազնվությունը>> թեմայով:	
22-րդ շաբաթ	Գարունը նման է մայրիկիս: Դու մայր բնության ամենամեծ հրաշք: Իմ անգին մայրիկ:	7.03
23-րդ շաբաթ	<<Լինենք հանդուրժող՝ չկորցնելով արժանապատվությունը>> թեմայով զրույց:	
24-րդ շաբաթ	Զրույց՝ << Գոհացնում է ինձ իմ առաջադիմությունը>> թեմայով:	
25-րդ շաբաթ	Պահպանենք վարվեցողության կանոնները:	
26-րդ շաբաթ	Զրույց՝ << Հետաքրքրասիրությունը լավ հատկանիշ է, թե վատ>> թեմայով:	
27-րդ շաբաթ	Զրույց՝ << Փողոցային երթևեկության կանոնները. մեր անվտանգությունը մեր ձեռքերում է>> թեմայով	
28-րդ շաբաթ	Զրույց նվիրված Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակման օրվան և այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:	23.04
29-րդ շաբաթ	<<Ինչպես պահպանել երկիր մոլորակը>> թեմայով զրույց:	
30-րդ շաբաթ	Զրույց՝ նվիրված մայիսյան եռատոնին: Պիտի սովորենք ապրել հաղթելով…	
31-րդ շաբաթ	Զրույց << Հանգստի հետ մեկտեղ ամրապնդենք անցածը>> թեմայով:	
32-րդ շաբաթ	Զրույց՝ << Գիրքն էլ մեզ պես խնամք է պահանջում>> թեմայով: Դասագրքերի վերանորոգում:	

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում:

2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում;

3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում:

4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում:

5.Աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում:

6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում: